Փաստաբանական գործունեության կազմակերպաիրավական ձևերը Հայաստանում

02.02.2013 18:30

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն. «Փաստաբանն իր գործունեությունը կազմակերպելու համար կարող է ընտրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կազմակերպաիրավական ցանկացած ձև»:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները»:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը մեկնաբանելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ պետք է արձանագրենք, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը որպես փաստաբանական գործունեության ձև ընդունելի է համարում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձև, որի ընտրությամբ հնարավոր կլինի իրականացնել փաստաբանական գործունեություն:

Բացի այդ, մեկնաբանվող հոդվածում օրենսդիրը օգտագործելով «կարող է» եզրույթը պարտադիր չի դարձրել փաստաբանի համար իր գործունեության կազմակերպման համար կազմակերպաիրավական ձևի ընտրությունը:

Արդյունքում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը որևէ իրավական հարաբերություններ չի կարգավորում, քանի որ դրա բացակայության պայմաններում էլ ցանկացած ոք իր գործունեությունը կազմակերպելիս կարող է ընտրել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կազմակերպակաիրավական ցանկացած ձև:

Վերոնշյալից կարելի է եզրահանգել, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը ինչպես օրենսդրական տեխնիկայի, այնպես էլ իրավական առումով միանշանակ վերախմբագրման կարիք ունի:

Օրենքով փաստաբանական գործունեության կազմակերպաիրավական ձև սահմանելու համար անհրաժեշտ է նախ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել փաստաբանական գործունեության տեսակը՝ ձեռնարկատիրական կամ ոչ ձեռնարկատիրական, ապա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով հստակ սահմանել, թե փաստաբանական գործունեությամբ զբաղվելու համար փաստաբանը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ինչպիսի կազմակերպաիրավական ձև պետք է ընտրի:

Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը տրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում, համաձայն որի. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»:

Այսինքն՝ վերը նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձի, տվյալ դեպքում՝ փաստաբանի, հիմնական նպատակը պետք է լինի շահույթ ստանալը ծառայություն մատուցելու կամ աշխատանք կատարելու միջոցով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով»:

Այսինքն՝ վերը նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ փաստաբանի հիմնական նպատակն է իրավական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանությունն, այլ ոչ թե շահույթ ստանալը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետի պրակտիկ կիրառումն ամրագրված է նաև փաստաբանի վարքագծի կանոններում, որոնք ամրագրվել են փաստաբանական գործունեության արդյունքում ձևավորված ավանդույթների հիման վրա, համաձայն որի՝ փաստաբանը չպետք է արհեստական վեճեր ստեղծի (դատական գործեր հարուցի) վստահորդի համար՝ հոնորարի չափն ավելացնելու նպատակով (Փաստաբանի վարքագծի կանոնագիրք, հոդված 3.7.2):

Այսպիսով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համակարգային վերլուծությունից հետևում է, որ փաստաբանական գործունեությունը չի կարող համարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող ձեռնարկատիրական գործունեություն:

Վերը նշված իրավական ակտերի վերլուծության արդյունքում չեմ ցանկանում բացառել, որ փաստաբանական գործունեությունը չի կարող երբևիցէ համարվել որպես ձեռնարկատիրական գործունեություն, մինչդեռ այդ դեպքում անհրաժեշտ է վերախմբագրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում «ձեռնարկատիրական գործունեության» սահմանումը և համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությունը (իրավաբանական անձանց, հարկային օրենսդրությանը վերաբերվող, ինչպես նաև այլ՝ իրավական ակտերը), որը չեմ կարծում ներկայումս նպատակահարմար կլինի՝ հաշվի առնելով ձևավորված ավանդույթները:

Վերը նշված օրենսդրության հակասության վերացնելու լավագույն ճանապարհն է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը, որով կսահմանվի, որ փաստաբանական գործունեությունը չի համարվում ձեռնարկատիրական գործունեության տեսակ, իսկ «փաստաբանական ծառայության մատուցման» տերմինը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքին համաձայն, պետք է փոխարինվի «փաստաբանական օգնություն տրամադրման» տերմինով:

Ինչ վերաբերվում է ոչ ձեռնարկատիրական գործունեության տեսակի դեպքում փաստաբանական գործունեության բնորոշ կազմակերպաիրավական ձևին, ապա առաջարկվում է ընտրել «Փաստաբանական գործունեության և փաստաբանության մասին» ՌԴ օրենքի 4-րդ գլխով նախատեսված իրավակարգավորումը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել փաստաբանական գործունեության կազմակերպաիրավական երկու ձև՝

1. փաստաբանական գրասենյակ (գործընկերության պայմանագրի հիման վրա երկու և ավելի փաստաբանների կողմից փաստաբանական գործունեությամբ զբաղվելու դեպքում),

2. փաստաբանական կաբինետ (մեկ փաստաբանի կողմից փաստաբանական գործունեությամբ զբաղվելու դեպքում):

Նման մոտեցումը լիովին բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջից, համաձայն որի. «ոչ առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել ... օրենքով նախատեսված այլ ձևերով»:

Ներկայացված առաջարկության ընդունման պայմաններում ոչ միայն կվերանան «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում, այլ իրավական ակտերում տեղ գտած թերությունները, այլ նաև կձևավորվի որակապես նոր փաստաբանական գործունեություն ինստիտուտ, որի պայմաններում նախ՝ փաստաբանական օգնության մատուցող փաստաբանի համար հստակ կլինի իր կողմից մատուցվող օգնության տեսակը, ապա՝ մեր հասարակության մեջ փաստաբանը կդիտվի ոչ թե որպես գործարար, այլ իրավապաշտպան:

Նիկոլայ Բաղդասարյան
Փաստաբանների պալատի խորհրդի անդամ
Փաստաբանական դպրոցի տնօրեն

Աղբյուրը՝ http://www.pastinfo.am

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })